ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 սեպտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

119
(2969)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՇՈՒՐՋ 620 ՀԱԶ. ԱՄՆ ԴՈԼԱՐ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի կեսերին քաղաքական էլիտան զբաղված է լինելու ոչ միայն Ազգային ժողովի նոր նստաշրջանի մեկնարկով, այլ նաեւ «Համաշխարհային հայկական գագաթնաժողով»-ի միջոցառմամբ:

«Համաշխարհային հայկական գագաթնաժողով»-ի համար, որը նախատեսված է կազմակերպել սեպտեմբերի 17-20-ը, արդեն ծախսվել է 242 մլն 399 հազար դրամ, որը հավասար է 620 հազար ԱՄՆ դոլարի: Օրինակ՝ նշված գումարով Նիկոլ Փաշինյանը կկազմակերպեր երկօրյա 16 հեծանվավազք Սեւանի շուրջբոլորը եւ նույնքան անգամ կհնչեցներ՝ կեցցե՛ հեծանիվը:

«Համաշխարհային հայկական գագաթնաժողով»-ը պետք է կազմակերպել 2024 թ. սեպտեմբերի 17-20-ը. նախատեսվում է առնվազն 800 մասնակից՝ աշխարհի մոտ 50 երկրից, եւ առնվազն 200 հյուր՝ Հայաստանի Հանրապետությունից: Գագաթնաժողովին նախատեսվում է ունենալ առնվազն 8 պանելային նիստ եւ առնվազն 25 քննարկում տարբեր ձեւաչափերով: Նախատեսվում է նաեւ կազմակերպել 3 ցուցահանդես (էքսպո), ինչպես նաեւ փակման եւ բացման տպավորիչ արարողություններ»: Նկատենք, որ, ըստ ծրագրի, նախատեսված է 180 բանախոս՝ շուրջ 20 երկրներից:

Սրան զուգահեռ Հայաստանում նախապատրաստվում են անցկացնել ՄԱԿ Զբոսաշրջության Գինու զբոսաշրջության 8-րդ համաշխարհային համաժողովը: Այս համաժողովի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հատկացրել է 151 մլն դրամ՝ գրեթե 380 հազար դոլար: Համաժողովն անցկացվելու է սեպտեմբերի 11-13-ը:

«Համաշխարհային հայկական գագաթնաժողով»-ի եւ ՄԱԿ Զբոսաշրջության Գինու զբոսաշրջության 8-րդ համաշխարհային համաժողովի կազմակերպչական հարցերով զբաղվելու է «Լաքշերի վոյաժ» ՍՊԸ-ն. հենց այս ՍՊԸ-ի հետ է կնքվել պայմանագիրը»:

«Լաքշերի վոյաժ» ՍՊԸ-ի ակտիվությունը պետգնումներում նկատելի է դեռ 2023 թվականից: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ընկերությունը հիմնադրվել է 2012 թվականին, եւ ըստ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի՝ ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասը 2015 թվականից պատկանում է Լիանա Դավիդյանին, տնօրենը նրա քույրն է՝ Աննա Դավիդյանը:

«Լաքշերի վոյաժ» ՍՊԸ-ն պետական գնումներին սկսել է մասնակցել 2023 թվականից եւ արդեն խոշոր չափի 7 պայմանագիր ունի՝ կնքված Երեւանի քաղաքապետարանի, վարչապետի աշխատակազմի եւ էկոնոմիկայի նախարարության հետ: Նշված պայմանագրերի արժեքը ընդհանուր առմամբ կազմում է գրեթե 520 միլիոն դրամ՝ շուրջ 1 միլիոն 340 հազար դոլար:

Ահա, թե ինչպիսի ծախսեր է նախատեսել իշխանությունը սեպտեմբեր ամսին, որոնք, մեծ հաշվով, ոչինչ չեն տալու անվտանգային լրջագույն խնդիրներ ունեցող մեր երկրին:

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունն առաջարկում է քաղաքային տրանսպորտը մեկ ուղեւորափոխադրման համար թողնել 100 դրամ, շատ օգտվելու դեպքում՝ գինը դարձնել 100 դրամից էլ ցածր, իսկ թոշակառուների եւ հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքային տրանսպորտը դարձնել անվճար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ 2025 թ.-ից ՔՊ-ն «Տրանսպորտային բարեփոխում» փաթեթավորմամբ պատրաստվում է բարձրացնել տրանսպորտի ուղեվարձը: Չնայած, որ հանրային մեծ աղմուկից հետո նախագիծը փոփոխությունների ենթարկվեց ու մի քանի անգամ հետաձգվեց, բայց հունվարի 1-ից տրանսպորտի նոր սակագներն արդեն ուժի մեջ են մտնելու, եւ քաղաքացիները ստիպված են լինելու տրանսպորտով երթեւեկելու համար ավելի թանկ վճարել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Մայր Հայաստան» խմբակցությունը Երեւանի ավագանու՝ սեպտեմբերի 10-ին կայանալիք նիստի օրակարգ է բերել մի նոր նախագիծ, որով առաջարկվում է տրանսպորտի ուղեվարձի հետեւյալ սակագները. 1 օրվա համար ֆիզիկական քարտ-տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ-տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 24 ժամվա ընթացքում բոլոր տրանսպորտային միջոցներից անսահմանափակ ուղեւորություն կատարելու հնարավորություն՝ 400 դրամով, 7 օրվա համար ֆիզիկական քարտ-տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ-տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում 7 օր բոլոր տրանսպորտային միջոցներից անսահմանափակ ուղեւորություն կատարելու հնարավորություն՝ 2.000 դրամով, 30 օրվա համար ֆիզիկական քարտ-տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ-տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում 30 օր բոլոր տրանսպորտային միջոցներից անսահմանափակ ուղեւորություն կատարելու հնարավորություն՝ 5.500 դրամով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող Հայաստանում ընդդիմադիր պատգամավորները զրկված են միջազգային հարթակներում եւ պատվիրակությունների կազմում ընդգրկված լինելու եւ իրենց կարծիքն արտահայտելու իրավունքից: Այսպիսով՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորությամբ սեպտեմբերի 25-30-ը պաշտոնական այցով Հայաստանից խորհրդարանական պատվիրակություն կմեկնի Կանադա՝ Օտտավա: Պատվիրակության կազմում Ալեն Սիմոնյանը հերթական անգամ ընդգրկել է բացառապես իշխանության ներկայացուցիչներին, իրենից բացի՝ ընտրել է ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանին, որը հայտնի է իր խուլիգանական վարքագծով, եւ մամուլն այդ մասին բազմիցս գրել է: Պատվիրակության կազմում են ՔՊ խմբակցության պատգամավորներ Ռուստամ Բաքոյանը, որը հայտնի է իր քաղաքացիական կնոջ հանդեպ բռնություն գործադրելու ամոթալի պատմությամբ, Արման Եղոյանը, որը հայտնի է իր իմպուլսիվ բնավորությամբ եւ բազմաթիվ սկանդալների ու կռիվների մեջ է հայտնվել մինչ այս, եւ, վերջապես, Հասմիկ Հակոբյանը, ով Ալեն Սիմոնյանի նախկին օգնականն է, ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանի ընկերուհին, որի բարեկամներն ու ծանոթները ԱԺ-ում են աշխատում կոռուպցիոն միջամտության արդյունքում: Եվ ահա, նրանք գնում են օրինակելի, ժողովրդավարական երկիր Կանադա՝ներկայացնելու ՀՀ Ազգային ժողովը: Մինչդեռ ԱԺ-ն հավաքական մարմին է, որտեղ կան նաեւ 2 ընդդիմադիր խմբակցություններ: Եվ հատկապես խորհրդարանական կառավարման երկրներում, ԱԺ-ի գործունեության շրջանակներում ընդդիմության ներկայացվածությունը պարտադիր է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Քաղաքական խարդավանքները միշտ ուղեկցել են տարբեր ժամանակների իշխանական թիմի ներկայացուցիչներին, բայց Նիկոլ Փաշինյանի իշխանության մեջ խարդավանքները հատկապես ընդգծված են: Արմեն Փամբուխչյանի անունն այդ համատեքստում հաճախ է շրջանառվում: Քաղաքական կուլիսներում պարբերաբար շրջանառվում են տեղեկություններ առ այն, որ Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը պարբերաբար դավեր է նյութում թիմի ներսում, որ ամեն գնով Երեւանի քաղաքապետ դառնա: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանին հասկանալու համար՝ ճիշտ են այն տեղեկությունները, որ նա դավեր է նյութում թիմի ներսում, որպեսզի դառնա քաղաքապետ: Հարցին ի պատասխան՝ Փամբուխչյանն ասաց. «Իմ ամբողջ կյանքի թե՛ աշխատանքային, թե՛ քաղաքական գործունեության ընթացքում, մասնավոր թե պետական, որեւէ մեկի դեմ դավեր չեմ նյութել, առավել եւս՝ թիմակիցների, մասնավորապես՝ ընկերների նկատմամբ: Դա իմ խառնվածքը եւ գործելաոճը չէ»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ԲՈԼՈՐԸ «ՄԵՂԱՎՈՐ» ԷԻՆ՝ ԲԱՑԻ ՓԱՇԻՆՅԱՆԻՑ»

Օգոստոսի 31-ին Նիկոլ Փաշինյանը մամուլի սուլիսի ընթացքում բազմիցս անդրադարձավ հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերություններին՝ խոսելով նաեւ գերիների վերադարձի շուրջ տարվող աշխատանքների եւ Արցախում Ռուբեն Վարդանյանի կատարած աշխատանքի մասին:

«Ժողովուրդ» օրաթերթը այս հարցի շուրջ զրույց է ունեցել «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանի հետ:

-Պարոն Առաքելյան, շաբաթ օրը՝ իր մամուլի ասուլիսի ընթացքում, Նիկոլ Փաշինյանը մի շարք աղմկահարույց հայտարարություններ արեց հայաստանյան ներքաղաքական իրավիճակի, բանակցությունների վերաբերյալ, ինչպես նաեւ անդրադարձ կատարեց գերիների շուրջ առկա իրավիճակին: Այս համատեքստում հատկապես ուշագրավ էին Ռուբեն Վարդանյանի վերաբերյալ նրա հայտարարությունները: Ձեր թույլտվությամբ՝ մեջբերեմ. «Ռուբեն Վարդանյանի դեպքը շատ ուշագրավ է, մի շարք դեպքեր կան նրա հետ կապված՝ ո՞վ նրան գործուղեց Արցախ, ի՞նչ նպատակով, ի՞նչ երաշխիքներ եւ խոստումներ տվեցին նրան. մենք նրան այդպես էլ չկարողացանք լավ ճանաչել»: Կխնդրեմ մեկնաբանել Նիկոլ Փաշինյանի վերոնշյալ հայտարարությունը:

-Ցավում եմ, որ Նիկոլ Փաշինյանը այդպես էլ չի գիտակցում, թե ինչ պաշտոն է զբաղեցնում, եւ սիրողական մակարդակի է իր խոսույթը, առավել եւս երկրի առջեւ ծառացած մարտահրավերների պարագայում սա պարզապես հերթական ապացույցն է, որ այդ մարդը իշխանության եւ երկրի առջեւ ծառացած խնդիրների հետ որեւէ կապ չունի: Նման խոսույթը, մեղմ ասած, բարոյական չէ, երբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են Բաքվի բանտում եւ Նիկոլ Փաշինյանի միակ գործառույթը այդ հարցով զբաղվելն ու այդ մարդկանց օր առաջ ազատելն է: Ինչ վերաբերում է իր ասածներին, ապա մեկնաբանելու կարիք անգամ չկա: Ռուբեն Վարդանյանի գործունեությունը վերջին 30 տարիների ընթացքում ավելի քան հայտնի է ժողովրդին: Փաստորեն, Նիկոլ Փաշինյանի եւ իր թիմի համար զարմանալի է, որ մարդը կարող է պարզապես հայրենասիրությունից դրդված քայլեր անել եւ ծառայել իր հայրենիքին: Այն վիճակում, որում Արցախն էր, Ռուբեն Վարդանյանը բազմիցս նշել է, որ մեզնից յուրաքանչյուրի պարտքն է լինել Արցախում եւ Արցախի կողքին, եւ բացառապես դրանից դրդված է նա մինչեւ վերջին պահը եղել Արցախի եւ արցախցու կողքին:

-Այդ դեպքում ի՞նչ նպատակ էր հետապնդում հենց այս պահին նման հայտարարություն անելը: Եվ, առհասարակ, գերիների վերաբերյալ Նիկոլ Փաշինյանը հաճախ է հայտարարություններ անում:

-Հաշվի առնելով, որ գերիների, առավել եւս՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության վերադարձի շուրջ որեւէ գործընթաց տեղի չի ունենում, կառավարությունը գոնե հրապարակային ոչինչ չի նախաձեռնում, որեւէ կոչ, որեւէ հրապարակային քայլ՝ միջազգային գործընկերների հետ համատեղ: Ոչ միայն այս հարցում, այլեւ առհասարակ, որեւէ հարցում Նիկոլ Փաշինյանը փաթեթավորում է այնպես, որ ինքը մեղավոր չէ, եւ այդպես էլ պետք է լիներ:

Ասում էր՝ «Արցախը Հայաստան է, եւ վերջ», «Միություն հանուն փրկության», սակայն վերջում պարզվեց, որ երեսուն տարի Արցախը բոլորը պատկերացրել էին Ադրբեջանի կազմում. բոլորը մեղավոր էին՝ բացի իրենից:

Մարդը ոչ մի բան չի կարողանում անել, ցավոք, տպավորություն է, որ նաեւ չի ցանկանում, ստացվում է այն տպավորությունը, որ Ադրբեջանի պաշտոնական թեզերն է առաջ տանում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ԴԻՄԵԼ Է ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՁՐԿՎԱԾ ԵՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ադյուտանտաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

Ակադեմիական քաղաք կառուցող իշխանության օրոք դպրոցների սանհանգույցներում սանիտարահիգիենիկ պայմանները ողբալի վիճակում են:

Գրություններ եմ ուղարկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին եւ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին:

Ահազանգել եմ Հայաստանի դպրոցներում եւ մանկապարտեզներում սանհանգույցների սանիտարահիգիենիկ պայմանների, տաք ջրի համատարած բացակայության, հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարությունների բացակայության, ինչպես նաեւ խմելու ջրից օգտվելու եղանակների մասին:

Սեպտեմբերի 1-ից՝ նոր ուսումնական տարվա մեկնարկի հետ, ես բազմաթիվ ծնողներից եւ ուսուցիչներից ստացել եմ դժգոհություններ, որ տարիներ շարունակ՝ թվարկված խնդիրները չեն լուծվում.

✔ Խոսվում է ներառականության մասին, սակայն դպրոցներում սանհանգույցներն անգամ հարմարեցված չեն սահմանափակ կարողություններ ունեցողների համար:

✔ Դպրոցների մեծամասնության ներսում զուգարանակոնքեր չկան (պպզելու միջոցով բնական կարիքները հոգալու հնարավորություն է միայն), որը դժվար է, հատկապես՝ տարրական դասարանների երեխաների համար:

✔ Շատ դեպքերում եւ այսպես կոչված «պպզովի», եւ «նստովի» զուգարանակոնքերը տեղադրված չեն փակ խցիկներում կամ գոնե առանձնացված չեն միջնորմերով, ինչը գործող նորմերի խախտում է:

✔ Դպրոցների մեծ մասում սանհանգույցների սենքերը եւ սարքավորումներն ապահովված չեն հեղուկ օճառով նույնիսկ:

✔ Մեծ մասում ապահովված չեն նաեւ ձեռքերի չորացման համար էլեկտրական սարքերով կամ թղթյա մեկանգամյա օգտագործման սրբիչներով (երեխաները տանից սրբիչ են տանում):

✔ Գրեթե համատարած բացակայում է տաք ջրամատակարարումը:

✔ Երեխաները ջուր խմում են սանհանգույցի ծորակներից, երբեմն ձեռքերով կամ ընդհանուր բաժակով, ինչը հիվանդությունների եւ վարակների տարածման մեծագույն ռիսկ է:

Պահանջել եմ նախարարներից տալ հետեւյալ պարզաբանումները.

● Ե՞րբ են վերջին անգամ ուսումնասիրել թվարկված խնդիրները

● Ի՞նչ են արձանագրել այդ դաշտում

● Դրանց լուծման մասով ի՞նչ ծրագրեր ունեն մշակված

● Ո՞րքան ֆինանսական ներդրում է անհրաժեշտ ՀՀ դպրոցների սանհանգույցները գործող իրավական նորմերին համապատասխանեցնելու եւ պատշաճ տեսքի բերելու համար

● Կոնկրետ ի՞նչ ժամկետներում են պատրաստվում լուծել տարրական սանիտարահիգիենիկ օրհասական խնդիրները հանրակրթական դպրոցներում:

Ի վերջո, ակադեմիական քաղաք կառուցելուց առաջ՝ նախ անհրաժեշտ է, որ ապագա ուսանողները նորմալ սանիտարահիգիենիկ պայմաններում ստանան իրենց դեռեւս դպրոցական կրթությունը:

Պարզաբանումները եւս կհանրայնացնեմ», - ամփոփել է պատգամավորը:

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սրբազան պայքարի երբեմնի ակտիվ մասնակիցներից Սուրեն Պետրոսյանը, ով պայքարի ամենաթեժ օրերին անհետացել էր, երեկ հարցազրույց է տվել Պետրոս Ղազարյանին ու մի շարք աղմկահարույց հայտարարություններ արել:

Ըստ Սուրեն Պետրոսյանի՝ «Սրբազան պայքարը» գլխավորվել եւ կառավարվել է նախկին նախագահների՝ Սերժ Սարգսյանի եւ Ռոբերտ Քոչարյանի կողմից: Իսկ թե ինչու է միայն հիմա դա անհանգստացնում Սուրեն Պետրոսյանին, նա պարզաբանում է՝ «նախկինների» ներգրավվածության մասին կասկածել է դեռ մայիսի 10-ից, սակայն չի բարձրաձայնել պրոցեսին չխանգարելու համար: Ներքին զրույցներում, սակայն, բարձրաձայնել է:

Սուրեն Պետրոսյանը, ամիսներ շարունակ շարժմանը մասնակցելուց հետո, հայտարարում է, որ իր համար կարմիր գիծ է եղել, որ շարժման մեջ խորհրդարանական ընդդիմությունը չպետք է լուրջ ներգրավվածություն ունենա:

Պետրոսյանի պնդմամբ՝ իշխանափոխություն հնարավոր է, եթե, նախ, լինի ընդդիմափոխությունը, ինչը, սակայն, ըստ նրա՝ տեղի չի ունեցել:

Ինչ վերաբերում է շարժման առաջնորդ Բագրատ սրբազանին՝ Սուրեն Պետրոսյանը նշում է՝ նրա հետ լուրջ հակասություն չի եղել, սակայն մայիսի 9-ի հանրահավաքին Բագրատ Սրբազանի կողմից իշխանությունների հրաժարականի պահանջ դրվել է, բայց նախկինների չվերարտադրվելու մասին նա չի հայտարարել:

Սուրեն Պետրոսյանը դժգոհում է խորհրդարանական ընդդիմությունից նաեւ այն բանի համար, թե թույլ չեն տալիս որեւէ նոր քաղաքական ուժ հայտնվի, իսկ ով քննադատում է իրենց, որակավորում են՝ «ՔՊ-ի գործակալ»:

Ստացվում է՝ Սուրեն Պետրոսյանի խնդիրը ոչ թե Նիկոլ Փաշինյանն է, այլ խորհրդարանական ընդդիմությունը:

Հիշեցնենք նաեւ, որ այս տարվա հունիսի 12-ին Ազգային ժողովի մոտ շարժման հանրահավաքի ժամանակ ոստիկանության կողմից հատուկ միջոցների կիրառումից հետո Սուրեն Պետրոսյանն այլեւս չի հայտնվել շարժման կողքին, իսկ մինչեւ այդ նա ներկա է եղել գրեթե բոլոր ակցիաներին:

ԿԱՆԱԴԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Կանադայի խորհրդարանի անդամ Գառնեթ Ջենուեյսը X-ի իր միկրոբլոգում անդրադարձել է Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին եւ խոսել Ադրբեջանի զավթողական, ցեղասպանական քաղաքականության մասին:

«Մեկ տարի առաջ Ադրբեջանը սեփական ընտրությամբ պատերազմ սկսեց Լեռնային Ղարաբաղի/Արցախի ինքնակառավարվող տարածքի դեմ: Հարձակմանը հաջորդել է այդ շրջանի բնակչության ամբողջական տեղահանումը»,- տեսանյութին կից գրել է Ջենուեյսը:

Ընդգծենք, որ գրառումն արվել է սեպտեմբերի 2-ին՝ Արցախի Անկախության օրը:

ԹՐԱՄՓԸ ԵՎ ՔԱՄԱԼԱ ՀԱՐԻՍԸ ԿԱՌԵՐԵՍՎԵՆ

ԱՄՆ նախագահի հանրապետական թեկնածու Դոնալդ Թրամփի եւ ԱՄՆ գործող փոխնախագահի, դեմոկրատ թեկնածու Քամալա Հարիսի մեծ հեռուստաբանավեճը տեղի կունենա սեպտեմբերի 10-ին՝ Փենսիլվանիայի Ֆիլադելֆիա քաղաքում: Սա կլինի նրանց առաջին դեմ առ դեմ հանդիպումը:

Բանավեճը կհեռարձակվի ABC News հեռուստաալիքով:

ԱՄՆ նախկին նախագահ Թրամփն իր սոցիալական էջում դժգոհություններ էր հայտնել հեռուստաբանավեճի անցկացման պայմանների հետ կապված. «Ես պայմանավորվածություն եմ ձեռք բերել արմատական ձախ դեմոկրատ ընկեր Քամալա Հարիսի հետ բանավեճ անցկացնելու շուրջ: Այն կհեռարձակվի ուղիղ եթերում ABC News կեղծ լուրերի հեռուստաալիքով, ամենազզվելի եւ ամենաանարդար հաղորդավարի հետ»:

Ինչ վերաբերում է նախագահի թեկնածուների բանավեճի անցկացման պայմաններին՝ նախատեսվում է, որ թեկնածուները բանավեճի ժամանակ կանգնած կլինեն, նրանք չեն կարող օգտագործել գրառումներ կամ նախապես պատրաստված թերթիկներ: Թեկնածուներին հարցերը նախապես չեն ուղարկվելու: Բանավեճի ընթացքում թեկնածուներից մեկի խոսելու ժամանակ մյուսի խոսափողն անջատվելու է: Հատկապես այս նախապայմանի հետ կապված թեկնածուների միջեւ լուրջ տարաձայնություններ եղան:

Նախնական երկու թեկնածուներն էլ նախապես համաձայնել էին մեկի ելույթի ժամանակ մյուսի խոսափողը միացված թողնելու շուրջ, սակայն Թրամփը հրաժարվել էր դրանից:

Հիշեցնենք, որ ԱՄՆ նախագահական ընտրությունները նշանակված են 2024 թվականի նոյեմբերի 5-ին:

ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ՀՐԴԵՀԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զապորոժիեի ատոմակայանի շուրջ ստեղծված իրավիճակում միջադեպերի վտանգը պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ ակտիվ ռազմական գործողությունները շարունակվում են: Այդ մասին ասել է ՄԱԳԱՏԷ-ի գլխավոր տնօրեն Ռաֆայել Գրոսին:

«Մենք պետք է մշտապես զգոն լինենք, քանի դեռ հակամարտությունը կամ ակտիվ ռազմական գործողությունները չեն ավարտվել: Կարծում եմ, որ որեւէ լուրջ բանի հավանականություն չի կարելի բացառել», - ասել է Գրոսին Զապորոժիեի ԱԷԿ կատարած այցից հետո:

Օգոստոսին Զապորոժիեի շրջանի նահանգապետ Եվգենի Բալիցկին հայտնել էր, որ Ուկրաինայի զինված ուժերի կողմից Էներգոդարի հրթիռակոծման հետեւանքով հրդեհ էր բռնկվել Զապորոժիեի ԱԷԿ-ի հովացման համակարգերում:

Ավելի վաղ ԱԷԿ-ի տնօրեն Յուրի Չերնիչուկը հայտնել էր, որ ատոմակայանում ներկա ՄԱԳԱՏԷ-ի տեսուչներին, իրենց խնդրանքով, հնարավորինս արագ ցույց են տվել տարածքում առկա իրավիճակը:

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔ ՉԻ ԼԻՆԻ

ՌԴ ԱԳՆ-Ն ՄՈԼՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

Իրանական Tasnim գործակալությունը վերլուծել է ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի՝ ռուսական Առաջին ալիքին տված հարցազրույցը, որտեղ նա հայտարարել էր. «Մենք կողմ ենք Բաքվի եւ Երեւանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրմանը եւ հաղորդակցությունների ապաշրջափակմանը: Ցավոք, Հայաստանի ղեկավարությունը խոչընդոտում է Սյունիքում հաղորդակցությունների վերաբերյալ վարչապետ Փաշինյանի ստորագրած համաձայնության կատարմանը»:



Գործակալությունը նշում է, որ ՌԴ ԱԳՆ-ի այդ դիրքորոշումը ԶԼՄ-ներում տարբեր մեկնաբանությունների եւ «Զանգեզուրի միջանցքը» բացելու՝ Ռուսաստանի ցանկության մասին տարբեր ենթադրությունների առիթ է տվել. «Իրանի բարձրաստիճան պաշտոնյաները Ռուսաստանի, Ադրբեջանի, Հայաստանի եւ Թուրքիայի պաշտոնյաների հետ հանդիպումներում բազմիցս հայտարարել են, որ Թեհրանը դեմ է այդ միջանցքին, որը սահմանների եւ տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխությունների կհանգեցնի: Ռուսաստանի այդ դիրքորոշումն նկատմամբ զգայունությունն ուժգնացավ ՌԴ ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովայի վերջին հայտարարություններից հետո»:

Վերջին քննարկումներից Իրանը դիվանագիտական միջոցներ է ձեռնարկել՝ ռուսական կողմին անհրաժեշտ ուղերձ փոխանցելու համար»:

Գործակալության հրապարակած հոդվածում մի քանի արձանագրումներ ու խորհուրդներ են ձեւակերպված՝ 7 հիմնարար կետերը:

. Առաջին հերթին՝ ՌԴ ԱԳՆ-ն Իրանի սպասելիքներին հակասող հայտարարություններ է անում: Ռուսաստանը մեր երկրի բարձրաստիճան պաշտոնյաների միջոցով տեղեկացված է եղել Իրանի հստակ եւ ճիշտ դիրքորոշման մասին, որի համաձայն՝ մենք դեմ ենք Զանգեզուրի եւ այլ միջանցքների բացմանը:

. Երկրորդ հերթին՝ Ռուսաստանի իշխանությունները հիանալի հասկանում են, որ ԻԻՀ-ը, որպես անկախ երկիր, որն ունի հստակ դիրքորոշում կապված տարածաշրջանային իրադարձությունների հետ, մշտապես դեմ է Ամերիկային, Արեւմուտքին եւ բոլոր նրանց, որոնք ձգտում են գերիշխող դիրք զբաղեցնել, եւ Իրանում Իսլամական հեղափոխությունից հետո պատմական իրադարձություններն հաստատում են Թեհրանի հիմնական ռազմավարությունն՝ ընդդեմ գլոբալ խաբեբաների:

. Երրորդ՝ Իրանը չի ընդունի իր սահմանների մոտ որեւէ փոփոխություն:

. Չորրորդ՝ Հարավային Կովկասի ոչ մի երկրի անվտանգությունն ու աշխարհաքաղաքական դիրքը, ոչ մի կանոնի համաձայն, չունի առավելություն մյուս երկրների նկատմամբ: Եվ ինչո՞ւ են մեր ռուսաստանցի բարեկամները կարծում, թե կարող են Զանգեզուրի միջանցքն օգտագործել՝ Հայաստանի հետ իրենց խնդիրները լուծելու համար:

. Հինգերորդ, երբ Ռուսաստանը պատերազմում էր Ուկրաինայի հետ, ամերիկացիները ցանկություն հայտնեցին ճանապարհ բացել Հարավային Կովկասում: Իսկ ԻԻՀ-ն միայնակ դիմակայեց ՆԱՏՕ-ին եւ Ամերիկային: Ինչո՞ւ է հենց հիմա Ռուսաստանը հայտարարում այդ մասին, երբ Իրանը հայտնել է իր հստակ դիրքորոշումը, որն ընդունում են կողմերը: Իրապես զարմանք է առաջացնում այս հարցը:

. Վեցերորդ՝ երկու երկրների իշխանությունները պատրաստվում են ռազմավարական հարաբերություններ կնքել, եւ դա ԻԻՀ կամքի դրսեւորման նշան է: Հաշվի առնելով պարոն Պուտինի եւ ԻԻՀ բարձրաստիճան պաշտոնյաների հստակ եւ կարեւոր պայմանավորվածությունները՝ ՌԴ ԱԳ նախարարի նման դիրքորոշումը զարմանք է առաջացնում: Կարծես, «ռազմավարական հարաբերություններ» հասկացությունը պետք է վերասահմանել ՌԴ ԱԳ նախարարի համար:

. Յոթերորդ՝ այժմ տպավորություն է ստեղծվում, թե ՌԴ ԱԳ նախարարը մոլորվել է եւ կարծում է, որ իր շահերից է բխում Հայաստանի հետ խնդիրները լուծելը՝ օգտագործելով Զանգեզուրի միջանցքը, որը չի ստեղծվի Իրանի դիմակայության շնորհիվ:

Գործակալությունը հիշեցնում է, որ այդ միջանցքը փակում է դեպի Եվրոպա Իրանի դարպասներից մեկը:

Ամփոփելով՝ Tasnim-ում հրապարակված հոդվածում ընդգծվում է, որ եթե ուզում են միջանցք բացել, արեւմուտքը անպայման կդիմադրի, եւ այդ ժամանակ այս հակամարտությունը սրման նոր օջախ կստեղծի Իրանի հյուսիսարեւմտյան զգայուն սահմանների մոտ:

Է. Մ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

Իսրայելյան թեժ իրավիճակներն առայժմ չեն հանդարտվում:

Չնայած այն հանգամանքին, որ վերջին 10 ամիսներին Իսրայելը ռազմական գործողություններ է իրականացնում Գազայում, հենց Իսրայելում էլ թեժ իրավիճակ է տիրում՝ 4-րդ օրն անընդմեջ բողոքի լայնամասշտաբ ցույցեր են իրականանում:

Իսրայելի ժողովուրդը դուրս է եկել փողոց՝ գրեթե կես միլիոն մարդ, Նեթանյահուի կառավարությունից պահանջելու Արեւմուտքի կողմից ահաբեկչական ճանաչված «Համաս»-ի հետ լուծման հասնել՝ պատանդներին «անհապաղ» վերադարձնելու հարցով:

Հարկ է նշել, որ Գազայի հատվածում հայտնաբերվել են դեռ հոկտեմբերի 7-ին պատանդառվածներից 6 անձանց դիերը, որոնք էլ վերջերս են սպանվել՝ Իսրայելի պաշտպանության բանակի մամուլի ծառայության հայտմամբ: The Jerusalem Post-ի հայտմամբ՝ դեռ կենդանի պատանդներ կան, որոնց համար կարելի է գործարք կնքել, սակայն Իսրայելի վարչապետ Նեթանյահուն, քաղաքական պատճառներով պայմանավորված, չի համաձայնում դրան:

Ահա այս ամենի պատճառով էլ ամեն բան սկսվել է:

Թել Ավիվում տեղի ունեցած բազմահազարանոց ցույցի ժամանակ ոստիկանությունը ջրցան մեքենաներ, խլացուցիչ նռնակներ է կիրառել, մի քանի մարդ վնասվածքներ է ստացել, հաղորդվում է շուրջ երեք տասնյակ ձերբակալվածների մասին: Ի նշան բողոքի՝ սկսվել է նաեւ մասշտաբային, համընդհանուր գործադուլ:

Բազմաթիվ իսրայելցիներ պատանդառուների սպանությունների աճի համար մեղադրում են հենց Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ՝ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Սեպտեմբերի 6-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն աշխատանքային այցով կմեկնի Կորեայի Հանրապետության մայրաքաղաք Սեուլ, այնուհետեւ, Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիո: Այս մասին տեղեկացնում են ԱԽ գրասենյակից:

Այցի ընթացքում ԱԽ քարտուղարը մի շարք աշխատանքային հանդիպումներ կունենա:

ՎԱՐՈՒՅԹ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է 19 ՏԱՐՎԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում իրականացված բազմակողմանի քննությամբ բացահայտվել է դեռեւս 2005թ. ապրիլին կատարված՝ ժամկետային զինծառայող Նաիրի Իսախանյանի սպանության դեպքը, հայտնում են ՔԿ-ից:

«2005 թ. ապրիլի 11-ին՝ ժամը 02:40-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահակակետի տարածքում գտնվող ճաշարանի աստիճաններին հարող տարածքում ճակատի միջիոնքային շրջանում հրազենային երկու վնասվածքներով հայտնաբերվել էր պահակային ծառայություն իրականացնող, նույն զորամասի ժամկետային զինծառայող Նաիրի Իսախանյանը, ով զորամասի հրամանատարության կողմից անմիջապես տեղափոխվել էր Գորիսի քաղաքային հիվանդանոց, որտեղ պարզվել էր, որ վերջինս մահացել է:

Դեպքի առթիվ նույն օրը նախաձեռնվել էր քրեական վարույթ, որի շրջանակներում թեեւ սպանության կատարման համար 2005 թ. մայիսին քրեական հետապնդում էր հարուցվել տուժողի համածառայակից՝ նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Վ.Ա.-ի նկատմամբ, սակայն նույն թվականի սեպտեմբերի 5-ին մեղքը հիմնավորող բավարար փաստեր ձեռք չբերվելու հիմքով՝ վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել էր եւ վարույթը կասեցվել:

2023թ. մայիսի 29-ին կայացված համապատասխան որոշմամբ քրեական վարույթով նախաքննությունը վերսկսվել է:

Նոր երեւան եկած հանգամանքների հիմքով 2023 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել՝ Վ.Ա.-ին առաջադրված մեղադրանքի ծավալի մասը վերացնելու մասին 2005 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը վերացնելու մասին: ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում իրականացված քննչական (այդ թվում՝ գաղտնի) եւ վարութային այլ մեծածավալ գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 2005թ. մարտի 29-ին ՀՀ ՊՆ N զորամասում հրաձգային գումարտակի պարտադիր ժամկետային զինծառայողների մասնակցությամբ տեղի է ունեցել վիճաբանություն, որից հետո ժամկետային զինծառայող Վ.Ա.-ն, տեղեկացված լինելով նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Նաիրի Իսախանյանի եւ ՀՀ ՊՆ ՌՈ Գորիսի բաժանմունքի աշխատակցի ազգակցական կապի մասին, անհիմն ենթադրել է, որ Ն.Ի.-ն իր ազգականի միջոցով տվյալներ է տրամադրում իրավապահ մարմիններին եւ մեղադրել է վերջինիս ՌՈ-ին ինֆորմացիա հայտնելու մեջ: 2005թ. ապրիլի 10-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Վ.Ա.-ն ականատես է եղել շարահրապարակի մոտակայքում Նաիրի Իսախանյանի եւ ՌՈ վերոնշյալ աշխատակցի խոսակցությանը: Նույն օրը՝ ժամը 20:00-ից 22:00-ն ընկած ժամանակահատվածում, Վ.Ա.-ն, համածառայողների շրջանում կեղծ հեղինակությունն ու դրանով պայմանավորված թվացյալ ազդեցությունն ընդգծելու շարժառիթով, գնացել է զորամասի մշտական տեղակայման վայրում գտնվող պահակակետ, որտեղ ժամապահի պարտականություններն իրականացնող Նաիրի Իսախանյանին անվանել է «մատնիչ»: Վերջինս հակադարձել է նրան, հիմնավորում պահանջել՝ նշելով, որ վերակարգի ծառայությունն ավարտելուց հետո այցելելու է նրան եւ խոսելու է այդ հարցի շուրջ:

Ժամեր անց՝ ապրիլի 11-ին՝ ժամը 02:20-ից 03:00-ն ընկած ժամանակահատվածում, Վ. Ա.-ն, դարձյալ գնացել է պահակակետ, որտեղ նոր կառուցվող ճաշարանին հարակից տարածքում, իր անձի «առավելություններն» ընդգծելու մոլուցքից, «ինքնահաստատման» պահանջից դրդված, խուլիգանական դրդումներով, համածառայակից Նաիրի Իսախանյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, «ԱԿ-74» տեսակի ինքնաձիգով երկու կրակոցից բաղկացած կարճ կրակահերթ է արձակել վերջինիս ուղղությամբ՝ ապօրինաբար կյանքից զրկելով նրան:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Վ.Ա.-ին վերջնական մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, որը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետին:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ վարույթի նյութերը դատարան ուղարկելու հարցը քննարկելու նպատակով»,- նշվում է հաղորդագրության մեջ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱԴԱՄԱՆԴՆԵՐԻ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՀՀ ՊԵԿ Էլեկտրոնային առեւտրի եւ օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչությունում հայտնաբերվել է մաքսային կանոնների խախտման նոր դեպք:

Օրերս «Զվարթնոց» օդանավակայանի ուղեւորների ժամանման սրահի մաքսային հսկողության գոտում ՊԵԿ էլեկտրոնային առեւտրի եւ օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության ուղեւորների մաքսային սպասարկան եւ հսկողության բաժնի եւ Մաքսանենգության դեմ պայքարի վարչության մաքսային ծառայողների կողմից մաքսային հսկողության է ենթարկվել Շարժա-Երեւան չվերթով ժամանած ՀՀ քաղաքացի եւ վերջինիս ուղեբեռը:

Մաքսային զննման (տեսազննման) արդյունքում նրա ուղեբեռից հայտնաբերվել են ոսկենման մետաղից պատրաստված 4 հատ 31 գրամ քաշով դեղին թեւնոց՝ թանկարժեք քարերի տեղադրման հենակների առկայությամբ, ադամանդ քարերի համար նախատեսված 239 հավաստագիր:

Անձի մաքսային զննման արդյունքում էլ քաղաքացու մոտ հայտնաբերվել է տարբեր տրամաչափերի ադամանդանման թափանցիկ քարերով լցված 37 պոլիէթիլենային տոպրակ՝ ընդհանուր 246 գրամ քաշով:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության համաձայն՝ խնդրո առարկա ադամանդանման թափանցիկ քարերը մշակված բնական ադամանդներ լինելու պարագայում, դրանց արժեքը հնարավոր է գերազանցի 8,000,000 (ութ միլիոն) ՀՀ դրամը:

«Ռազմավարական տեսակետից կարեւոր հումքային ապրանքների եւ մշակութային արժեքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության համապատասխան որոշման համաձայն՝ մշակված բնական ադամանդներն ընդգրկված են նույն որոշմամբ սահմանված ցանկում, եւ մաքսային մարմնի տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ հայտնաբերված ադամանդանման թափանցիկ քարերի մաքսային արժեքը գերազանցում է ՀՀ քրեական օրենսգրքի 292-րդ հոդվածով սահմանված ռազմավարական տեսակետից կարեւոր հումքային ապրանքների խոշոր չափը՝ 8 միլիոն ՀՀ դրամը:

Նշված դեպքի առթիվ կազմվել է մաքսանենգության դեպքի վերաբերյալ արձանագրություն եւ փոխանցել է ՀՀ քննչական կոմիտե:

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ԱՐԱՋԻ ՓՈՂՈՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ սեպտեմբերի 4-ին՝ գիշերը ժամը 22:05-ին, Արտաշատ քաղաքի Արազի փողոցում իրարանցում է սկսվել:

Փողոցի բնակիչները վախից մտել են իրենց տներն ու թաքնվել:

Ահազանգի հետքերով փողոց են գնացել իրավապահները, ու պարզվել է, որ վերոնշյալ փողոցի բնակիչ Ն.Մ-ն իր մոտ եղած որսորդական հրացանով՝ «ՄՌ-27Մ»-ով, իր տան դիմացի հատվածից 6 անգամ կրակոց է արձակել օդ՝ կոպիտ կերպով խաթարելով հասարակական կարգը: Իրավապահները ձերբակալել են վերջինիս:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը օրերս հանդիպել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի եւ պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցի հետ: Հանդիպմանը մասնակցել են նաեւ Պաշտպանի եւ Փաստաբանների պալատի ներկայացուցիչները:

Ողջունելով հյուրերին՝ Անահիտ Մանասյանն ընդգծել է, որ փաստաբանների մասնագիտական աշխատանքն առանցքային կարեւորություն ունի իրավունքի գերակայության ապահովման գործում: Այս համատեքստում կարեւորվել է Պաշտպանի հաստատության եւ Փաստաբանների պալատի միջեւ ձեւավորված ամուր համագործակցությունն ի շահ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության:

Պաշտպանը նշել է, որ փաստաբանի պաշտպանված մասնագիտական գործունեությունը մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգի կարեւորագույն նախապայմաններից է, արդարադատության համակարգում եւ իրավունքի գերակայության ապահովման գործում այն ունի առանցքային կարեւորություն:

Հանդիպման ընթացքում քննարկվել են փաստաբանների մասնագիտական գործունեության խոչընդոտներին, բռնի տեղահանված անձանց իրավական աջակցության խնդիրներին, իրավաբանական օգնության նկատմամբ կիրառվող հարկային փոփոխություններին առնչվող եւ մի շարք այլ հարցեր:

Ի թիվս այլնի՝ զրուցակիցներն անդրադարձել են համագործակցության հնարավոր ուղղություններին եւ համատեղ միջոցառումների իրականացմանը:

Իր հերթին, Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը շնորհակալություն է հայտնել հանդիպման համար եւ կարեւորել պաշտպանի հաստատության դերը մարդու իրավունքների պաշտպանության առաքելության իրականացման գործում:

ՕՊԵՐԱՏԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«Կանեփ-կակաչ-2024» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումն ավարտվել է օրերս: Միջոցառմանը մասնակցել են ոստիկանության գրեթե բոլոր ստորաբաժանումները: Հայտնաբերվել եւ այրման միջոցով ոչնչացվել է շուրջ 38 տոննա կանեփի եւ 21 կիլոգրամ կակաչի վայրի աճած զանգված: Բացի այդ, միջոցառման շրջանակում իրականացված զննությունների եւ խուզարկությունների արդյունքում 76 տնամերձ հողամասերից հայտնաբերվել է կանեփի մոտ երեք հազար բույս: Արձանագրվել է հանցագործության 215 դեպք, որոնցով ապօրինի շրջանառությունից առգրավվել են ավելի քան 21 կգ մարիխուանա, 49 կգ կանեփ, 62 գրամ ափիոն, մոտ 22 դեզոմորֆին, 4 կգ-ից ավելի մեթամֆետամին, 21,5 մլ մեթադոն, մոտ 13 գրամ հաշիշի յուղ, 65 գրամ սփայս եւ տարբեր տեսակի հոգեմետ 52 դեղահաբ:

Թեեւ ավարտվել է «Կանեփ-կակաչ-2024» միջոցառումը, սակայն ոստիկանությունը չի պատրաստվում թուլացնել ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարի տեմպերը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 4-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 96 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԵՐՈՍԻ ԱՐՁԱՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Կիրանցի նախկին դպրոցի առաջ հառնում է զոհված ազատամարտիկ Գագիկ Վարդանյանի արձանը, Կիրանցի հիմնական դպրոցը կոչվում է Գ. Վարդանյանի անվամբ: Վարդանյանը հերոսաբար զոհվել է Արցախյան առաջին պատերազմում՝ 1992 թվականի մարտին: Կիրանցի նորակառույց դպրոցի շենք Գ. Վարդանյանի արձանը չեն տեղափոխել: Կիրանց գյուղից հայտնեցին, որ գյուղի հիմնական դպրոցի տնօրեն Վոլոդյա Բաբինյանը հայտնել է, որ հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման, նորակառույց դպրոցի տարածքում տեղադրելու համար պետական բյուջեից գումար չի հատկացվել, դա կարող են անել զոհված հերոսի հարազատները: Զանգահարեցինք Վ. Բաբինյանին, նա ասաց, որ Գագիկ Վարդանյանի եղբայր Գրիշան, ով բնակվում է ՌԴ Լիպեցկ քաղաքում, հանձն է առել իրականացնել եղբոր հուշարձանի տեղափոխումը նորակառույց դպրոցի տարածք: Կիրանց գյուղից հայտնում են, սակայն, որ Գրիշա Վարդանյանը չի ցանկանում, որ եղբոր հուշարձանը տեղափոխվի Ադրբեջանին հանձնված տարածքից ընդամենը 40 մետր հեռավորությամբ գտնվող դպրոց, որովհետեւ մտավախություն ունի, որ այն կարող է դառնալ ադրբեջանական դիվերսիայի, անարգման թիրախ, ինչպես դարձավ Շուշիում Վազգեն Սարգսյանի արձանը:

ՇՆԱԳԱՅԼԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՐՁԱՆԵՐԸ ԲԱՋՄԱՑԵԼ ԵՆ

Տավուշի մարզում ավելացել է շնագայլերի թիվը: Նրանք գիշերները գյուղերի ձորերում աղիողորմ, մարդկային լացի նման ձայներ են արձակում: Շնագայլերը ոչնչացնում են գյուղացիների հավերը, ճուտերը: Նախկինում շնագայլերը գիշերով գյուղացիների այգիներն ու բանջարանոցներն էին մտնում, հիմա դեպքեր են լինում, որ նրանք գյուղերում ցերեկով են հայտնվում: Փոխվել է նաեւ այդ կենդանիների պահվածքը. նախկինում նրանք փախչում էին, երբ հայտնվում էին ավտոմեքենաների լուսարձակների լույսի տակ, հիմա չեն վախենում, չեն փախչում: Բագրատաշենի բնակիչ Մուշեղ Մամուլյանն ասում է, որ շնագայլերի մի քանի տեսակներ է նկատել, մի քանի տարի է, ինչ դրանց վարվելակերպում փոփոխություն կա, դրանք վխտում են գյուղերի փողոցներում, բակերում: Մի քանի տարի առաջ շնագայլերը Բագրատաշենի դպրոցի մոտ գիշերը հոշոտել էին գյուղացիներից մեկի էշը: Մուշեղ Մամուլյանին շնագայլերից առավել անհանգստացնում է գյուրզա տեսակի օձերի բազմանալը: Այս տարի Բագրատաշենում մի քանի դեպք է եղել, որ այգիներում, տների բակերում շները սատկել են թունավոր օձերի խայթոցներից: Մուշեղն ասում է. «Մոտ մեկ ամիս առաջ իմ շանն էլ, որը մաքրացեղ դոբերման էր, գյուրզան կծեց, ու սատկեց խեղճը: Օձը պնդուկի ծառի վրա էր, շունս ինձ փրկեց, իսկ ես իրեն չկարողացա փրկել՝ անտիգյուրզին չգտնելու պատճառով: Հակաթույն ունենալու խնդիրը կարեւոր է, հատկապես սահմանին կանգնող ,սահման պահող զինվորների համար եմ անհանգիստ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՍՏԱԿԵՑՈՒՄՆԵՐ

ԴԵՂԱՏՆԻՑ ԴԵՂԵՐԻ ԲԱՑԹՈՂՆՄԱՆ ԿԱՐԳ

Կասեմանվի եւ կիսակեցվի բժշկական հաստատության դեղատան կողմից դեղերի բացթողնման կարգը, ինչը կնդաստի օրենքի խախտմամբ ներմուծված կամ չգրանցված կամ ժամկետանց դեղերից հնարավոր բաշխման դեպքերի նվազեցմանը կամ բացառմանը, բացի դրանից, նշված գործառույթների վերահսկողությունը կդարձնի առավել համաչափակ ու արդյունավետ:

ԱԺ պատգամավորներ Նարեկ Զեյնալյանի, Լուսինե Բաղալյանի հեղինակած ««Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը քննարկվել է ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում:

Հիմնական զեկուցող, ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նարեկ Զեյնալյանը, ներկայացնելով վերոնշյալ օրենքում լրացում կատարելու անհրաժեշտությունը, նշել է, որ Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում բազմիցս արձանագրվել են դեպքեր, երբ դեղերի մեծածախ իրացման կամ դեղատնային գործունեության լիցենզիաներ ունեցող ընկերությունների կողմից մեկ տարվա ընթացքում ոչնչացման են ներկայացվել օրենքի խախտմամբ ներմուծված, կամ չգրանցված դեղեր, վտանգավոր թափոնների ոչնչացում իրականացնող կազմակերպությունները տվել են ոչնչացումը հավաստող փաստաթղթեր եւ դրանք ներկայացվել են տեսչական մարմնին: Մյուս կողմից, վերահսկողական գործիքակազմի բացակայությունը հնարավորություն չի տալիս տեսչական մարմնին հավաստիանալու՝ դեղերն իրապես ոչնչացվո՞ւմ են, թե՞ ոչնչացումը ստանում է փաստաթղթային ձեւակերպում, սակայն իրականում դրանք իրացվում են:

Խնդրի լուծման նպատակով առաջարկվում է պիտանիության ժամկետը լրացած, չգրանցված, կեղծ, օգտագործման համար ոչ պիտանի, օրենքի խախտմամբ ներմուծված, անորակ, չհայտարարագրված բաղադրատարրեր պարունակող դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ոչնչացում իրականացնող լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առձեռն կամ փոստով, միաժամանակ նաեւ էլեկտրոնային փոստով, տեսչական մարմնին առնվազն 3 աշխատանքային օր առաջ տրամադրել ոչնչացում իրականացնելու վերաբերյալ տեղեկություն՝ ոչնչացման ենթակա դեղի անվանման, քանակի, սերիայի, պիտանիության ժամկետի, ոչնչացման վայրի, ժամի, ոչնչացում իրականացնելու համար դիմողի տվյալների վերաբերյալ: Ոչնչացում իրականացնելու վերաբերյալ տեղեկության չտրամադրումը կամ սահմանված ժամկետի խախտմամբ տրամադրումը կառաջացնի օրենքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

Ոչնչացման գործընթացը նախատեսվում է իրականացնել տեսչական մարմնի ներկայացուցչի անմիջական մասնակցությամբ եւ տեսաձայնագրմամբ:

Նարեկ Զեյնալյանի խոսքով՝ ոչնչացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը տեսչական մարմնին սահմանված ժամկետում տրամադրելը հնարավորություն կտա վերահսկելի դարձնել ոչնչացման գործընթացը, կապահովի գործընթացի իրականացման թափանցիկությունը, կկանխի հնարավոր ոչ օրինաչափ գործողությունների իրականացումը:

Հարցի վերաբերյալ կառավարության դրական դիրքորոշումը հայտնել է ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արտակ Զումայանը:

Օրենքների նախագծերի փաթեթը ստացել է դրական եզրակացություն:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԹՈՒՄՈ»-Ի ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ՝ ՀԱՍԱՆԵԼԻ

«Թումո»-ն սկսում է նոր ուսումնական տարին Եղեգնաձորում ժամանակավոր կենտրոնի գործունեության մեկնարկով: Վեց «Թումո» տուփերից կազմված ժամանակավոր կենտրոնը «Թումոյի» տեխնոլոգիաների եւ դիզայնի ոլորտներում արտադպրոցական անվճար կրթությունը հասանելի է դարձնում մարզի բոլոր պատանիների համար:

Մարզում գործող կրթական ցանցը հնարավորություն է տալիս շաբաթական շուրջ 1,300 պատանիների հմտանալ ամենաարդիական ոլորտներում, ինչպիսիք են խաղերի ստեղծումը, ծրագրավորումը, անիմացիան, ֆիլմերի ստեղծումը, թվային նկարչությունը, 3D մոդելավորումը եւ ավելին:

Ժամանակավոր կենտրոնը գտնվում է քաղաքի ավագ դպրոցին կից տարածքում՝ Շահումյան 12 հասցեում: Սեպտեմբերի 2-ից այստեղ են անցկացվում գրանցված ուսանողների եւ նրանց ծնողների հետ կողմնորոշիչ հանդիպումները, իսկ սեպտեմբերի 9-ից կսկսեն ինքնուսուցման վարժանքները եւ դասընթացները: «Թումոն» հրավիրում է Վայոց Ձորի բոլոր 12-18 տարեկան պատանիներին միանալ ծրագրին՝ ծնողների օգնությամբ գրանցվելով register.tumo.org կայքում:

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆ

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Իզաբելլա Աբգարյանը ֆեյսբուքյան իր էջում ահազանգել է, որ արդեն երրորդ օրն է, ինչ դեպի Հրազդան, Չարենցավան գնացող երթուղայիններով կանգառում 40 րոպե եւ ավելի քաղաքացիները եւ հատկապես ուսանողությունը ստիպված են կիզիչ արեւի տակ սպասել ավտոբուսի, որպեսզի կարողանան հասնել տուն:

«Երթուղայինի մոտենալուն պես՝ վայրկյենական լցվում է՝ հրմշտոցով, ԿԱՆԳՆԱԾ երթեւեկել պատրաստ ուսանողությամբ:

Ուզում ենք մարզերը զարգանա՞ն, Երեւանը բեռնաթափվի՞: Այս ուսանողներից յուրաքանչյուրը վաղն ամեն ինչ կանի, որ մնա Երեւանում, որ իր երեխաներն էլ այս տանջանքները չտեսնեն: Չմոռանաք բոցաշունչ ճառեր ասել ուսանողության, երիտասարդության օրվա առթիվ»,- գրել էր նա:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց տվյալ երթուղին սպասարկող «Մուլտի Տրանսպորտ» ՍՊԸ ընկերության շահագործման բաժնի ղեկավար Արման Կարապետյանի հետ՝ հասկանալու, թե ինչով է պայմանավորված տրանսպորտի նման հաճախականությամբ աշխատանքը, վերջինս ասաց, որ նման բան լինել չի կարող:

«Հրազդան-Երեւան երթուղին սպասարկող 270 համարի ավտոբուսն աշխատում է 5-ից 10 րոպե միջանկյալ ժամանակով: Օրվա ընթացքում կարող է լինել մեկ երթ՝ ցերեկային ժամերին 15 րոպե (դա ամենաերկար ինտերվալն է), իսկ Չարենցավանը 4-ից 12 րոպե է, միջինում 5-8 րոպեն մեկ մի մեքենա է գնում Չարենցավանից Երեւան:

Մեքենաները տեղորոշման համակարգ ունեն ու GPS-ով տեսնում ենք»,- հավելեց նա:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԻՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը այցելել է հեղուկ գազի լցակայաններ՝ պարզելու՝ ինչ իրավիճակ է տիրում հեղուկ գազի շուկայում, քանի որ հեղուկ գազի գինն անդադար աճում է:

Լցակայանի աշխատակիցները «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշել են, որ առաջիկայում կրկին թանկացումներ են սպասվում, իսկ վարորդներն էլ իրենց հերթին հայտնել են իրենց դժգոհությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է նաեւ գազաբալոններ տեղադրող մասնագետի հետ, ով նշել է, որ շատ վարորդներ հեղուկ գազի գազաբալոնները փոխարինում են եւ տեղադրում սեղմված գազի գազաբալոններ:

ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Արագածոտնի մարզի բոլոր բնակավայրեր հասնող միասնական երթուղային ցանցի ներդրման աշխատանքները գործնական փուլում են: Գործընթացը քննարկելու նպատակով Արագածոտնի մարզում էր Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանը, որը Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի հետ խորհրդակցություն է անցկացրել համայնքապետների եւ Արագածոտնի մարզի երթուղիները սպասարկող կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, ողջունելով ներկաներին, նշել է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանձնարարականի կատարումն ապահովելով՝ ներդրվում է միասնական երթուղային ցանց, որը հանրային տրանսպորտով ապահովելու է անգամ մարզի ամենահեռավոր գյուղերին:

Փոխնախարարը ներկայացրել է ցանցի ներդրման նպատակով հայտարարվող մրցույթի մանրամասները, միջազգային լավագույն փորձը, լսել մասնակիցների առաջարկություններն ու դիտարկումները, որի արդյունքում վեր են հանվել խնդիրներն ու նախանշվել դրանց լուծման ուղիները:

ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԿԱՊՈՒՂԻ

Երեւանյան 28 փողոցներում վերգետնյա մալուխները կանցկացվեն ստորգետնյա կապուղիներով. կփորվի շուրջ 80 կմ խրամուղի: Գործընթացն այս պահին իրականացվում է Թումանյան եւ Հանրապետություն փողոցներում: Նախագծի շրջանակում «Երքաղլույս»-ի հենասյուներով անցնող հաղորդալարեր այլեւս չեն լինի:

Քաղաքապետարանից հայտնում են, որ նախագիծը ներառում է նաեւ հենասյուների ու նատրիումային եւ սնդիկային լամպերի փոխարինում LED լուսատուներով: Ծրագրի հիմնական նպատակը Երեւանում անվտանգ ու էներգախնայող արտաքին լուսավորության ցանց ունենալն է:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՇՈՒԿԱ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԿԲԱՐԵԼԱՎՎԻ՞

2024 թվականի օգոստոսի 12- 26-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է մի շարք կարեւոր տվյալներ: Երկրորդ եռամսյակի ՀՆԱ-ի աճի եւ հուլիս ամսվա տնտեսական ակտիվության վերաբերյալ հրապարակված տվյալները շարունակում են վկայել Հայաստանի տնտեսության, այդ թվում՝ ներքին պահանջարկի ուժեղ վիճակի մասին: Եթե այս դինամիկան, պահպանվի, այն պետք է նպաստի երկրում ներդրումային միջավայրին: Այնուամենայնիվ, շինարարության ոլորտում արագացված տեմպերով աճը կարող է հանգեցնել շուկայում առաջարկի եւ պահանջարկի անհավասարակշռության եւ միջնաժամկետ հեռանկարում ճնշում գործադրել անշարժ գույքի գների վրա:

• Հայաստանի ՀՆԱ-ն երկրորդ եռամսյակում աճել է տարեկան 6.4%-ով (մինչեւ մոտ 2.3 տրլն դրամ)՝ գերազանցելով աճի ակնկալիքները, որոնք կազմել են տարեկան 5.5%: Ամենաբարձր աճի տեմպերն արձանագրվել են անշարժ գույքի (+19,7% տարեկան), մեծածախ եւ մանրածախ առեւտրի եւ ավտոմեքենաների/մոտոցիկլետների վերանորոգման (+19,6% տարեկան), ինչպես նաեւ շինարարության եւ մասնագիտական, գիտատեխնիկական գործունեության ոլորտներում (աճը՝ 17.9% տարեկան): Ամենամեծ անկում է գրանցվել հանքարդյունաբերության ոլորտում (բաց հանքերի արդյունահանում եւ շահագործում եւ այլն)՝ 15.1% տարեկան, կապի ոլորտում՝ 14.1% տարեկան:

• Հայաստանում հուլիսին տնտեսական ակտիվությունը տարեկան կտրվածքով աճել է 6,2%-ով (կանխատեսված 4,1%-ի դիմաց), իսկ հունիսի համեմատ՝ 5,6%-ով: Յոթ ամսվա ընթացքում աճը կազմել է 9.6% տարեկան կտրվածքով: Շինարարության ծավալները շարունակում են աճել՝ հուլիսին տարեկան 17.7%-ով եւ 11.6% տարեկան տարբերակով:

• S&P-ն տարվա համար գնաճը կանխատեսում է 1,6%: Նախատեսվում է նաեւ, որ Հայաստանի տնտեսությունը մինչեւ 2027 թվականը կաճի տարեկան մոտավորապես 5,0%-ով:

• Հայաստանի առեւտրի դեֆիցիտը 15,3%-ով բարձր է եղել առաջին կիսամյակի մակարդակից (դոլարին համարժեք դրամով):

Արտահանումը երկրից հուլիսին նվազել է 5,4%-ով, իսկ ներմուծումն աճել է մոտ 2,5%-ով:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԺԱՄԱՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

Զբոսաշրջության ամառային սեզոնն ավարտված է, սակայն Հայաստանում զբոսաշրջության բում այս տարի եւս չեղավ: Եթե նախորդ 2 տարիներին զբոսաշրջությամբ Հայաստան ժամանած քաղաքացիների մեծ մասը Ռուսաստանից էր, այժմ այդ թիվը նվազել է. նախկինում մինչեւ 500 հազար ՌԴ քաղաքացի էր գալիս Հայաստան, այժմ ՌԴ-ից Հայաստան եկողների թիվը ավելի է նվազել՝ դառնալով 395 հազար 688 մարդ:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ 2024 թվականի առաջին եռամսյակում Հայաստան է այցելել 435 775 զբոսաշրջիկ, ինչը 14 հազար 206-ով պակաս է 2023 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

Հարկ է նշել, որ 2024 թվականի առաջին եռամսյակում Ռուսաստանից Հայաստան ավելի շատ էին ժամանում, քան ամռան ամիսներին:

Ռուսաստանից հետո հաջորդը Վրաստանն է, որտեղից Հայաստան են գալիս զբոսաշրջության նպատակով:

Վրաստանից Հայաստան է եկել 126 հազար 927 մարդ, ապա հաջորդում է Իրանը՝ 69 հազար 252 մարդ, Հնդկաստանը՝ 24 հազար 949 մարդ, ԱՄՆ-ից՝ 17 հազար 42 մարդ եւ այլն:

Զբոսաշրջության նպատակով Հայաստան են գալիս անգամ Ֆիլիպիններից,

Չինաստանից, Գերմանիայից, Ֆրանսիայից եւ այլ երկրներից:

Wildberries ԹԵ՞ Temu. ՕՆԼԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերջին շրջանում շատ դժգոհություններ են հնչում «Վայլդբերիզ» օնլայն առեւտրի կենտրոնի վերաբերյալ: Շատ օգտատերեր բողոքում են, որ պատվերներն իրենց հասնելու համար երկար ժամանակ է պահանջվում, կամ ետ ուղղարկված ապրանքի գումարը չի փոխհատուցվում. պատվերը նշված ժամկետից շուտ է ետ գնում՝ առանց քաղաքացու հաստատման:

Հիմա մեկ այլ խնդիր է, շատ օգտատերերի հոռախոսում օնլայն ծրագիրը չի աշխատում, կամ նշվում է, որ տվյալ ապրանքը սպառված է:

Նման խնդիրների պատճառով հայերն արդեն անցել են չինական առեւտրի շուկա՝ օգտվելով Temu օնլայն առեւտրի հարթակից:

Քաղաքացիները նկատել են, որ «Վայլդբերիզում» բոլոր ապրանքներն ավելի թանկացել են, այդ իսկ պատճառով հիմա ավելի արդի է դարձել Temu-ն, որտեղ բոլոր ապրանքներն ավելի մատչելի են, պատվերը հասնում է նշված ժամանակից շուտ, ետ վերադարձի համար գումար չի գանձվում:

Նյութերը՝ ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

70–77 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ ԿՐԹԱԹՈՇԱԿ

Բակալավրիատում եւ մագիստրատուրայում սովորողների ոլեական կրթաթոշակի չափերի եւ մասնագիտությունների ցանկի մասին նախագծում փոփոխություններ կլինեն: Նախորդ տարվա ցանկում ընդգրկված էին բնագիտական ուղղություններով մանկավարժական ծրագրեր, այս տարվանից կներառվեն նաեւ ագրարային ուղղվածությամբ մասնագիտություններ, որոնք եւս ոլեության համար առաջնային նշանակություն ունեն: Այդ մասին երեկ՝ սեպտեմբերի 5-ին, կառավարության նիստում համաոլատասխան որոշումը ներկայացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

«Առաջարկում ենք այս ցանկում ներառել մի շարք այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են պարենային անվտանգության եւ թվային գյուղատնտեսության ոլորտում ռազմավարական նշանակության մասնագիտությունները, անասնաբուժության, անասնաբուժական, սանիտարական փորձաքննության, ագրոնոմիայի, որում ներառված են օրգանական գյուղատնտեսության, ջերմատնային ագրոտեխնոլոգիայի, բույսերի պաշտպանության ոլորտները, անտառային տնտեսության եւ բնակավայրերի կանաչապատման, անասնաբուծության, կենդանագիտության եւ կենսատեխնոլոգիայի, պարենամթերքի տեխնոլոգիայի, խմորման արտադրության տեխնոլոգիայի, գինեգործության, սննդամթերքի անվտանգության եւ ճշգրիտ գյուղատնտեսության ոլորտները»,- թվարկեց նախարարը եւ հավելեց՝ նպատակը այս ոլորտներում կրթություն ստացողների թիվը մեծացնելն է:

Նախագծի ընդունման արդյունքում, ըստ առաջադիմության, 70-77 հազար դրամ կրթաթոշակ կտրամադրվի ագրարային վերոնշյալ մասնագիտություններով սովորողներին:

«Որոշման կարգավորումները տարածվելու են այս ուսումնական տարվանից՝ 2024-2025 ուսումնական տարվանից, այս ուղղություններով առաջին կուրս ընդունված սովորողների վրա»,- ասաց նախարարը եւ տեղեկացրեց, որ խոսքը մոտ 220 ուսանողների մասին է, որոնք սովորում են ագրարային մասնագիտություններով:

Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ բնագիտական մասնագիտությունների մասով կրթաթոշակի ներդրումից հետո այս ուղղություններով ընդունվածների աճ է արձանագրվել, օրինակ՝2022-ին բնագիտական մասնագիտություններով ընդունված ուսանողների թիվը 124 է եղել, 2023-ին՝ շուրջ 251, իսկ 2024-ին՝ 304 ուսանող, այն է՝մոտ 2,5 անգամ ավելի, քան 2022-ին էր՝ մինչեւ որոշման ընդունումը:

Իր հերթին վարչապետ Նիկոլ Փաշինյանն արձագանքեց, որ սա այն որոշումներից է, որը բխում է իրական կյանքից, եւ այս որոշման անհրաժեշտությունը տեսել է տարբեր մարզերում:

Նաեւ նկատեց, որ գյուղատնտեսության ոլորտում որոշ մասնագետներ աշխատում են ժամավճարով, որի 1 օրվա գինը, օրինակ, կարող է հասնել 700-800 եվրոյի: Մի քանի օրով նման մասնագետի վարձելը հասու չէ գյուղատնտեսին:

«Այս տրամաբանությունից ելնելով՝ ներդրողները խնդիր են դնում, ասում են՝ մենք ենք փնտրում աշակերտների եւ փորձում ենք ուղեկցել, որ նրանք մասնագիտություն ընտրեն, այսօրվանից գան, սկսեն զրոյական մակարդակից աշխատել, զուգահեռ կրթություն ստանալ, եւ հիմա սա պահանջված է, եւ որպեսզի մենք նաեւ այս խողովակով այդ մասնագիտությունները խթանենք՝ իմանալով, որ աշխատատեղեր կան, եւ այդ աշխատատեղերը թափուր են եւ գնալով մեծանալու են»,- ասաց վարչապետը՝նշելով, որ որոշումը կարեւոր է նաեւ տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՆՈՐԱՀԱՅՏ ԵԿԵՂԵՑԻ՝ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը պեղումներ է իրականացնում Արարատի մարզի Լանջանիստ գյուղի «Սպիտակ վանք» համալիրում (ղեկ. պ.գ.թ. Դ.Միրիջանյան): Այն բաղկացած է Ս. Աստվածածին եկեղեցուց, հարակից տապանաբակից, օժանդակ շինություններից: Ս. Աստվածածին եկեղեցին թվագրվում է 14-րդ դ. սկզբով՝կառուցված է սպիտակ, սրբատաշ ավազաքարով, որից էլ առաջացել է ժողովրդական անունը՝ Սպիտակ վանք:

Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտից հայտնում են, որ պեղումների ուշագրավ արդյունքներից է նորահայտ եկեղեցին, որը բացվել է Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային կողմում: Նորահայտ եկեղեցու պատերը պահպանվել են գրեթե 1.5 մ բարձրությամբ, խորանին իր տեղում հայտնաբերվել է Սուրբ սեղանը, իսկ հյուսիսային պատին՝մկրտության ավազանը:

Պեղումների արդյունքում հայտնաբերվել են նաեւ բազմաթիվ տապանաքարեր, որոնցից որոշները կրում եմ մարդու սխեմատիկ պատկերներ, ինչը բնորոշ է 13-14-րդ դդ., ինչպես նաեւ մեկ մոնղոլական դրամ:

Նորահայտ եկեղեցու խորանին պահպանված Սուրբ սեղանը եւ մկրտության ավազանը:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՇՔԵՂ ԵԼՈՒՅԹԸ

Հայաստանի պետական կամերային նվագախումբը Շվեյցարիայի Ժնեւ քաղաքում հանդես է եկել Puplinge Classique փառատոնին, որն այս տարի նշել է իր 15-ամյակը:

Փառատոնի հանդիսավոր երեկոյին հանրահայտ Victoria hall-ում դիրիժոր Լյուք Բաղդասարյանի ղեկավարությամբ կամերային նվագախումբն արժանանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելությանն ու հոտնկայս ծափահարություններին:

Համերգին ելույթ է ունեցել նաեւ «Sine Nomine Quartet»-ը, ինչպես նաեւ դաշնակահար Ֆրանսուա-Քսավյե Պոզատի, կլարնետահար Դամիան Բախմանը, երգչուհի Էլինա Դունին, Բայջու Բհատը եւ Red Sun-ը: Համերգի երկրորդ բաժնում Կամերային նվագախմբի հետ ելույթ է ունեցել շվեյցարական երիտասարդական նվագախումբը, ինչը երկկողմանի մշակութային երկխոսության լավագույն դրսեւորումներից էր:

Երեկոն իրենց ներկայությամբ պատվեցին հայ եւ շվեյցարացի բարձրաստիճան այրեր: Միջոցառմանը ներկա էր Շվեյցարիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանը եւ դեսպանության ամբողջ անձնակազմը, ինչպես հայկական հիմնադրամների խորհրդի անդամներ, հայ համայնքի ներկայացուցիչներ, միջազգային հանդիսատես, ֆրանկոֆոնիայի գրասենյակի ներկայացուցիչներ:

Սա նվագախմբի հյուրախաղերի առաջին կանգառն էր՝նվիրված Շառլ Ազնավուրի 100-ամյակին:

Փառատոնին նվագախումբը մասնակցեց գեղարվեստական ղեկավար Ֆրանսուա-Քսավյե Պոզատի եւ միջազգային երաժշտական փառատոնի Գալա համերգի գեղարվեստական համակարգող Անի Գասպարյանի հրավերով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԴԱԼՆԵՐ՝ ՉԵԽԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՑ

Չեխիայի Պլզեն քաղաքում ավարտված վազող թիրախ մրցաձեւի Եվրոպայի առաջնության մրցումային վերջին օրը եւս մեդալաշատ է եղել Հայաստանի հավաքականի համար:

Գոհար Հարությունյան - Լիլիթ Մկրտչյան - Արուսյակ Գրիգորյան թիմային եռյակը 50մ խառը վազք մրցաձեւում 1086 միավոր արդյունքով դարձել է բրոնզե մեդալակիր:

Գոռ Խաչատրյանը 50մ խառը վազք մրցաձեւի երիտասարդների անհատական պայքարում 388 միավորով նվաճել է ոսկե մեդալ:

Գոռ Խաչատրյան - Հայկ Մինասյան - Համլետ Կարենյան եռյակը 50մ խառը վազք մրցաձեւի երիտասարդների թիմային պայքարում 1107 միավորով դարձել է արծաթե մեդալակիր:

50մ խառը վազք մրցաձեւի երիտասարդների թիմային պայքարում Մարի Ղազարյան - Անահիտ Սարգսյան - Աիդա Ազատյան եռյակը 1036 միավոր արդյունքով արժանացել է արծաթե մեդալի:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՌԱՍԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մադրիդի «Ռեալի» եւ Բրազիլիայի հավաքականի հարձակվող Վինիսիուսը կարծում է, որ ՖԻՖԱ-ն պետք է քննարկի Իսպանիային 2030 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերն ընդունելու հնարավորությունից զրկելու հարցը, եթե երկրում չկարգավորվի ռասիզմի հետ կապված խնդիրը: ԱԱ-2030-ն անցկացվելու է երեք երկրում՝ Իսպանիայում, Պորտուգալիայում ու Մարոկկոյում:

«Մինչեւ 2030 թվականը շատ ժամանակ կա փոփոխություններ կատարելու համար: Հուսով եմ՝ Իսպանիան կփոխվի եւ մարդիկ կգիտակցեն, թե որքան լուրջ բան է մարդուն մաշկի գույնի համար անպատվելը:

Կարծում եմ՝ եթե մինչեւ 2023 թվականն իրավիճակը չփոխվի, պետք է փոխել աշխարհի առաջնության մրցավայրը: Ֆուտբոլիստներն իրենց հարմարավետ ու անվտանգ չեն զգա մի երկրում, որտեղ կան ռասիզմի դրսեւորումներ:

Ցանկանում եմ հնարավոր ամեն բան անել, որպեսզի իրավիճակը փոխվի, քանի որ Իսպանիայում շատ մարդիկ ռասիստ չեն:

Դա մարդկանց փոքր խումբ է, որը փչացնում է մի երկրի համբավը, որտեղ ապրելը շատ հաճելի է»,- բրազիլացու խոսքերը մեջբերում է CNN-ը:

Իսպանիայի Լա լիգայի խաղերի ժամանակ Վինիսիուսը մի քանի անգամ հայտնվել է ռասիստական սկանդալի կենտրոնում:

● *Սեպտեմբերի 14-ին Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում կբեմադրվի «Տապանի մոտ ժամը 8-ին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-5.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ծառայողական քննության կողմերն ինչպիսի իրավունքներ ունեն:

Մերի Սարգսյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ծառայողական քննության կողմն իրավունք ունի ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված դեպքերում եւ ընթացակարգով՝

ա) ներկայացնել ծառայողական քննություն անցկացնելու դիմում,

բ) ծառայողական քննություն սկսելու պահից ստանալ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված իր իրավունքների եւ պարտականությունների մասին գրավոր ծանուցում,

գ) ստանալ ծառայողական քննության անցկացման կապակցությամբ խորհրդի որոշումների պատճենները, որոնք կարող են բողոքարկվել դատական կարգով,

դ) ծառայողական քննության ցանկացած փուլում միջնորդություններ ներկայացնել՝ առանձին գործողություններ կատարելու, ինչպես նաեւ ծառայողական քննության նյութերին իր դիմումը հիմնավորող, ծառայողական քննություն անցկացնելու կարգով նախատեսված փաստական տվյալներ կցելու եւ դրանց ընթացք տալու վերաբերյալ,

ե) ծառայողական քննության ցանկացած փուլում, գրավոր դիմում ներկայացնելով, հետ վերցնել ծառայողական քննություն անցկացնելու մասին իր դիմումը,

զ) տալ բացատրություններ,

է) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքներին կամ արձանագրություններին եւ դրանց կապակցությամբ դիտողություններ ներկայացնել, որոնք հաշվի չառնելը բողոքարկման ենթակա չէ,

ը) ծառայողական քննությունն ավարտվելուց հետո ծանոթանալ քննության նյութերին, քննությունը լրացնելու կապակցությամբ ներկայացնել միջնորդություններ:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ իրավունքներ:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով:

Հայկ Գաբրիելյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը,

բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց,

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

ՀՀ փաստաբանների պալատ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար եւ իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչեւ եռամսյա ժամկետ: Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար:

Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այսօր՝ ժամը 12:00-ից մեկնարկում է «Գրքի երեւանյան 7-րդ միջազգային փառատոն»-ը: Հայաստանի ազգային պատկերասրահում 3 օր շարունակ ընթերցասերներին կսպասեն բազմաթիվ հետաքրքիր գրական միջոցառումներ եւ իհարկե մեծ զեղչեր սիրելի գրքերի համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11 + 16	+25 + 30
Կոտայքի լեռներ	+10 + 16	+27 + 29
Կոտայքի նախալեռներ	+20 + 23	+29 + 30
Գեղարքունիք	+11 + 16	+25 + 28
Լոռի	+14 + 18	+29 + 33
Տավուշ	+18 + 22	+30 + 33
Արագածոտնի լեռներ	+11 + 14	+17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18	+27 + 31
Արարատ	+23 + 25	+33 + 37
Արմավիր	+20 + 22	+31 + 34
Վայոց ձորի լեռներ	+11 + 14	+29 + 31
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23	+32 + 36
Սյունիքի հովիտներ	+21 + 24	+33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17	+30 + 32
ԼՂՀ	+13 + 16	+29 + 31
Երեւան	+25 + 27	+32 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.9.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*